

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՅԻ ԵՎ ՀՈՎՀՍՆԵՍ ԴՐԱՍԽԱՆԱԿԵՐՏՑԻ

(Աղբյուրի վերաբնագրման սկզբունքների մասին)

Ա. Բ. ՍԱՐԿՍՅԱՆ

Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը» խոր հետք է թողել հայ միջնադարյան մատենագրության տարբեր հուշարձանների վրա: Արդեն IX—X և հետագա դարերի պատմիչները օգտվել են նրա երկից՝ երբեմն այն ընդարձակորեն վերապատմելով: Բնական է, որ նրանք իրենց քաղումներն արել են այնպիսի ձևագրերից, որոնք պատկառելի հնություն են ունեցել «Հայոց պատմության» մեզ հասած նույնիսկ ամենահին ընդօրինակության համեմատությամբ¹: Նման պատմաններում Խորենացուց կատարած այդ հնագույն քաղումների և հարասած հատվածների ուսումնասիրումը զառնում է այն հիմնական ուղիներին, որից մեկը, որից կարելի է այս կարևոր բնագրի առավել նախնական վիճակը պարզելու ուղղությամբ որոշակի նպաստ ակնկալել²: Այս նպատակով առաջին հերթին քննելի են Խորենացուն հարասող պատմիչների շեղումներն ու տարբերությունները: Հասկանալի է, որ նրանց վերապատմած բոլոր հատվածներում չէ որ կարելի է տեսնել հնագույն ձևագրական տարբերակ: Խորենացուց օգտված պատմիչներից յուրաքանչյուրը ունեցել է իր պատմագիտական ու գեղագիտական պատկերացումները, հին շրջանի պատմությունը շարադրելու իր նպատակներն ու ծրագիրը, աղբյուրներից օգտվելու սկզբունքները, կարգացածը վերարտադրելու մեթոդներն ու ձևերը և այլն:

Խորենացու «Պատմության» հետ ունեցած հարաբերության առումով Հովհաննես Դրասխանակերտցու «Հայոց պատմությունը» առանձնակի աեղ է գրավում: Դրասխանակերտցուն անդրադարձած բոլոր հայագետները արձանագրել են, որ կաթողիկոս պատմիչը մեծ ուշադրություն է դարձրել իր գործը «քերթողական արվեստով» շարադրելուն: Այդ իրողությունը վկայում է նաև ինքը պատմիչը: Թեև այս հարցը հատուկ ուսումնասիրության առարկա չի դարձել, սակայն հպանցիկ դիտարկումներն իսկ նկատելի են դարձրել նրա «քերթողական արվեստի» արդյունքներից մի քանիսը. ա) լեզվի արհեստականությունը, բ) լեզվական իրթնություններ և անհարթություններ, գ) դասական հեղինակներին բնորոշ բառապաշարի, կապակցությունների օգտագործում³:

¹ Խորենացու «Պատմության» ձևագիր օրինակները շնչած քիչ չեն, բայց մեծ մասամբ ծագում են XVII դարից: Հնագույն է համարվում Մաշտոցի անվան Մատենադարանի 2865 համար կրող գրչագիրը, որի միայն մի մասն է թվագրվում XIII—XIV դդ., մյուս մասը նորոգվել է 1567 թ.: Տեղեկություններ կան նաև 1303 թ. գրված մի ձևագրի մասին (տե՛ս Մովսիս Խորենացու Պատմություն Հայոց, աշխատասիրութեամբ Մ. Արևղեան և Ս. Յարության, Տիֆլիս, 1913, Յառաջադրանք, էջ ԺԹ—ԻԱ և ԻԵ—ԻԸ):

² Այսպես օրինակ՝ Ստ. Մալխասյանցը, հենվելով Ստեփանոս Ասողիկի և Խորենացու երկերի վրա՝ հարաբերության վրա, ցույց է տվել, որ վերջինիս «Պատմության» Բ գրքի 29 գլուխը նախապես այլ բովանդակություն է ունեցել (տե՛ս Ա. Մ. Մալխասյանց, Մովսես Խորենացու նոր աղբյուրը.— «Մուրճ», 1892, էջ 1852—1863): Կամ՝ Գ. Տեր-Մկրտչյանը Թովմա Արծրունու մի վկայության հիման վրա ենթադրում է, որ Խորենացու Պատմության նրա օգտագործած օրինակում նկարագրված է եղել Տրդատի թագումը, որ այժմ չկա (տե՛ս Գ. Տեր-Մկրտչյան, Հայագիտական ուսումնասիրություններ, Ա. Երևան, 1979, էջ 56—60):

³ Տե՛ս Ս. Ա. Երզնյան, Երկեր, հ. Գ, Երևան, 1968, էջ 483—486: Բացասական երանգ ունեն Դրասխանակերտցու «քերթողական արվեստին» Վ. Առաքելյանի (Գրիգոր Նարեկացու լե-

Ճիշտ է նշվել նաև պատճառը՝ արդեն սովորովի դասական գրաբարով գրելու և ընդհանրապես հին հեղինակներին նմանվելու բուռն ձգտումը։ Նկատելի է, որ գիտնականների դիտարկումները հենվել են հիմնականում Դրասխանակերտցու «Պատմության» ինքնուրույն մասերի վրա։ Երբևէ փորձ չի արվել Դրասխանակերտցու խոստացած «քերթողական արվեստը» գիտել որպես նրա ստեղծագործական միջոցների դիմանդ, գեղագիտական և պատմագիտական ընկալումների համակարգ, մասավանդ՝ նախորդ պատմիչներից կատարած քաղումների դեպքում։ Նրա «Պատմության» մեղ հետաքրքրող մասը (մինչև V դարի կեսերն ընդգրկող հատվածը) բնութագրվել է որպես Խորենացուց եկող սոսկ բանաստեղծություն, պատմական երկը հնագույն ժամանակներից սկսելու ավանդական ստեղծում։ Նման եղրակացությունը ունեւ իրական հիմք. Խորենացու «Պատմությունը» հիշյալ ժամանակահատվածի համար փաստորեն նրա միակ աղբյուրն է, շարադրված հենց այն լեզվով ու ոճով, որին ձգտել է Դրասխանակերտցին իր «Պատմությունը» շարադրելիս։ Թվում է, նրան այլ բան չէր մնում անել, քան ընտրել անհրաժեշտ նյութը և շաղկապել այն։

Իրականում Դրասխանակերտցին այդպես չի վարվել։ Նրա «քերթողական արվեստը» շատ ակտիվ ու ներգործուն է եղել նաև այս դեպքում։ Այդ մասին է խոսում «քերթողական արվեստի» նրա ձևակերպումը. «Այսպէս և ես... զայս պատմութիւն առնել տաղտկացեալ տագնապեցայ։ Սակայն ոչ ըստ գեղջկաց անարուեստից երկրորդեալ զայն, ինչ զոր նախ Լան զմեզ քաջ և բանաստեղծի. արժնոյակապ և գարմանալիք գարծանի բան պատմութեան անտուտ ի վերուստ արձանագրեցին զյայտապատում իրս թագաւորաց և զպաշտօնաւորութիւն իշխանաց և զհանգամանս պատերազմաց և զշինանիստ շինուածս քաղաքաց և գաւառաց, գեօղից և գերդաստանաց, և զգործս արեաց և անարեաց կամ զխռովութեանց և զխաղաղութեանց, զի մի՛ տղայաբար ինչ լանդգնեալ զմիանգամ գրեալսն երկրորդեցից և զերթողացն արուեստ տալսլեցից, և զայն վերծանողացն ծիծաղելիս յարկացուցից»⁴։

Առաջին հայացքից թվում է, թե հեղինակը խոստանում է «անարվեստ գեղջուկներին» նման չլրկնել («երկրորդել») այն, ինչը արդեն քաջ, բանաստեղծ... մարդիկ արձանագրել են, որովհետև մի անգամ արդեն գրածը կրկնելը կլինի տղայական հանդգնություն և քերթողական արվեստի ոտնահարում։

Նակայն ինչպե՞ս կաբող էր նման բան գրել պատմիչն այն դեպքում, երբ նա շարադրում էր մի ժողովրդի պատմությունը սկզբից մինչև իր ժամանակները և նախորդ շրջանի համար, բնականաբար, պետք է դիմեր գրավոր աղբյուրների։ Ուրեմն, այստեղ խոսքը ոչ թե նախորդներից պատմական փաստական նյութ քաղելու, այլ այդ անելու ձևի մասին է։ «Երկրորդել»-ը պետք է հասկանալ ընդօրինակելու, բառացի հետևելու նշանակությամբ։ Հեղինակն այդ ձևն է դատապարտում, գտնելով, որ դա կնշանակի տապալել «քերթողական արվեստը»։ Այդ է հուշում ոչ այնքան բառի իմաստը (կրկնել), այլ այն տրամաբանությունը, որ իսկապես, հին պատմիչներից բառացի բանաստեղծություններ կատարելու համար, պոանց խոսքի ներքին կառուցվածքին միջամտելու, պետք է չէր հատուկ «քերթողական» պատրաստություն, և որ նման պատրաստություն ունեցող ու զրան մեծ կարևորություն սովող պատմիչը կարող էր իրեն իրավունք վերապահել այն համարելու «ըստ գեղջկաց անարուեստից»։ Սա արդեն նշանակում է, որ Խորենացու «Պատմությունից» քաղված նյութը պետք է ներկայացվեր այնպես, որ նույն փաստերի և իրադարձությունների վերաշարադրանքը հնարավորին չափ հեռու լիներ բնագրից։

գուն և ոճը. Երևան, 1975, էջ 9—22) և հատկապես Ստ. Մալխասյանցի (Մատենագրական դիտողություններ. Երևան, 1961, էջ 204—206) տված գնահատականները։

⁴ Տովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցու Պատմութիւն Հայոց. Թոֆլիս, 1912, էջ 4—5։ Այսուհետև այս հրատարակությանը արված հղումները կտանք տողամեջ, փակագծերում։

Դրասխանակերտցիներն ունեցել է մեկ այլ, ոչ պակաս կարևոր սկզբունք ևս. «Բերթողական արվեստով» գրել նրա համար նշանակել է նաև գրել այնպես, ինչպես V դարի պատմիչները և առաջին հերթին՝ խորենացիները:

Ստացվում է տրամագծորեն հակադիր պահանջներով մի խնդիր. հնարավորին չափ ձևափոխել խորենացուց քաղած նյութը, բայց այդ անել անպես, որ շտուժի խոսքի քերթողական (խորենացիական) մակարդակը:

Արդ՝ ո՞րն է այդ, այսպես ասած, դրասխանակերտցիական պահանջների իրացման ճշմարիտ ուղին:

Ստորև կներկայացնենք Դրասխանակերտցու կիրառած միջոցներից մի քանիսը օրինակներով, որոնցում առկա փոփոխությունները կարող էին դիտվել նաև որպես պատմիչի ձեռքի տակ եղած սկզբնաղբյուրի տարբերակներ:

ա) Դրասխանակերտցին աշխատում է հատկապես բնորոշ բառերն ու արտահայտությունները փոխարինել նույնպիսի հնչեղության այլ համարժեքներով, որոնց մի մասը նրա բառապաշարի մեջ կարող էին մուտք գործել դասական պատմիչներին ծանոթ լինելու ճանապարհով: Օրինակ. խորենացի (Գ, ԺԴ, 272)⁵ «...քնամանալ անիծիւք Տիրան ի ժերունոյ քահանայէն Դանիելէ» — Դրասխանակերտցի (էջ 45)⁶ «իսկ ժերունին Դանիէլ... անիծակուր զարքայն արարեալ: խորենացի (Գ, ԺԶ, 275)⁷ «որում անուն ներսէս ճանաչէր, որ ի Կեսարիայ էր ի հրահանգս» — Դրասխանակերտցի (էջ 45)⁸ «ներսէս անուն... որ յայնժամ էր ի վարժս ուսման ի Կեսարիայ»: խորենացի (Գ, ԿԴ, 349)⁹ «սա (Բրքիշոն — Ա. Ս.) եկեալ վատթար ընկերակցօք, ածեալ ընդ ինքեան և կանալս տնկալուչս» — Դրասխանակերտցի (էջ 57)¹⁰ «որ տանտիկին կանամբք զտուն իւր մատակարէր»¹¹:

Այս ղուգահեռները այնքան մոտ են իրար, որ կարող էին նույն բնագրում առաջանալ նաև որպես տարբերակներ, մանավանդ, եթե նկատի ունենանք, որ խորենացու բնագիրը հարուստ է մեկնողական բնույթի տարբերակներով:

Միշտ չէ, որ Դրասխանակերտցու ընտրած համարժեքները նույն հասցողության բնույթ են փոխարինում աղբյուրի այս կամ այն բառին և չեն խաթարում միտքը. խորենացի (Ա, ԻԱ, 65)¹² Մարացի Վարբակիսը «խտացուցանէր բարուցն և ձեռանց առատութեամբ... բարեկամս» — Դրասխանակերտցի (էջ 20)¹³ «զի Վարբակէս... ի քաջաց արանց բարեկամս իւր կազմեալ առատութեամբ բազկալ»: Ընդգծվածը, որ առաջին դեպքում ունի առատաձեռնության իմաստը, նույն բանը չի կարող նշանակել երկրորդ դեպքում:

Խորենացուն նման լինելու, բայց միաժամանակ բառացի չկրկնելու Դրասխանակերտցու ձգտման խստապահանջությունը հատկապես լավ է բնորոշում հետևյալ օրինակը. Մաշտոցի ընտրած առաջին աշակերտների համար խորենացին ունի «ուշեղս և քաջասունս, փափկաձայնս և երկարոգիս» որոշիչները (Գ, ԾԴ, 328): Մրանցից ոչ մեկը Դրասխանակերտցին նույնությամբ չի կրկնում, բայց աշխատում է գտնել նույնպիսի և անդամ՝ նույն թվով բնորոշումները: Խորենացու և տրամախոհ համարժեքները դնելուց հետո նա, ուրիշ հարմար որակումներ չգտնելով, դիմել է այսպիսի միջոցի. աղբյուրի ուշեղ և քաջասուն բառերից կազմել է նոր բառ՝ քաջուշեղ, իսկ փափկաձայն-ի երկրորդ արմատը՝

5 Օգտագործում ենք՝ Մովսիսի խորենացու Պատմության Հայոց, աշխատությանը Մ. Արեղյան և Ս. Հարությունյան (Տփլիս, 1913) հրատարակությունը. փակագծերում կնշվեն գիրքը, գլուխը և էջը:

6 Հմմտ. նույն Բրքիշոնի մասին Ղազար Փարպեցու հաղորդումը «...որ եկեալ յաշխարհն Հայոց... տանտիկնօք» (Ղազարայ Փարպեցու Պատմություն հայոց եւ թուրք առ Վահան Մամիկոնեան, աշխատությանը Գ. Տեր-Մկրտչյան և Ստ. Մալխասյան. Տփլիս, 1904, էջ 26):

7 Այդ մասին տե՛ս Գ. Տեր-Մկրտչյան. Հայագիտական ուսումնասիրություններ, էջ 22—41:

ձայն-ը, փոխարինել է վանկ-ով՝ փափկավանկ, և ստացել «մանկունս խոհեմամիտս, տրամախոհս, փառուշեղս, փափկավանկս» (էջ 54)⁸:

բ) Երբեմն համարվել է թե փոխարինում է աղբյուրի ունեցած այս կամ այն բառին, այլ գումարվում նրան: Դրա հետևանքով առաջանում են նույնանիշ բառերի կուտակումներ, որոնք էլ խորացնում են խոսքի ճարտասանական և հոնտորական տպավորությունը: Խորենացի (Բ, Ը, 117)՝ «և ժամս որոշէ... խորհրդոց» — Դրասխանակերտցի (էջ 26)՝ «որոշէ և ժամս խորհրդոց և երաստից»: Խորենացի (Ա, ԺԲ, 41)՝ «ինքն գնաց զմիւս լերամբն արևելեան հիւսիսոյ» — Դրասխանակերտցի (էջ 17)՝ «Իսկ Գեղամ՝ շուեալ երթեալ անցեալ գնացեալ զլերամբն արևելեայ հիւսիսոյ»:

գ) Նույն անձի կամ երևույթի համար միևնույն առիթով Խորենացու օգտագործած բնորոշումները Դրասխանակերտցու ձեռքով տեղափոխվում են այլ տեղ, օգտագործվում այլ առիթով: Այսպես. նա Գրիգոր Լուսավորչին «լուսաւորութեանս նախապետ», «նախաշաւիղ հանապարհ», «հոգևոր հառապայք» (էջ 40) է կոչում ճգնակեցութեան անցնելու և սթոնակալութեան տևողութեան մասին Խորենացու հաղորդումները կրկնելիս: Խորենացին այս նույն բնորոշումները Լուսավորչի համար օգտագործում է այլ առիթներով (Բ, ՂԱ, 244—245): ՄԼԼ այլ օրինակ. նախարարները հայոց թագավոր Արտաշիրից երես են թեքում, քանի որ վերջինս «սկսաւ աղողանել յանառակ ցանկութիւնս» (Գ, ԿԳ, 346): Դրա փոխարեն Դրասխանակերտցին ունի «սա զի գեղի էր միշտ ի զինակաւ շարիս անարգել» (էջ 56): Ընդգծված բառերը Խորենացու մոտ գտնում ենք Սահակ կաթողիկոսի խոսքում՝ «գինացեալ է մարմնով, այլ ոչ անհատաւ հոգեով. գեղի է վարուք, այլ ոչ կրակապաշտ» (Գ, ԿԳ, 347):

դ) Դրասխանակերտցին մեկին վերաբերող Խորենացու խոսքը երբեմն օգտագործում է մեկ ուրիշի կապակցութեամբ: Այսպես օրինակ՝ Մեսրոպ Մաշտոցը լքում է աշխարհիկ կյանքը, մտնում հոգևոր ասպարեղ. «Սա սիրեաց զմիայնակեցութեան վարս. որպէս ասաց ոմն, թէ ի նաւահանգիստ փութայ նա խոռվեալ, և անձն ժուծկալ խնդրէ զանապատ» (Գ, ԽԷ, 316): Ընդգծվածը Դրասխանակերտցին գործածել է Գրիգոր Լուսավորչի առիթով. «Այլ երթայր բերակէր լոբեայն ի Մանէ այլս՝ ըստ գրեցելումն, թէ ի նաւահանգիստ փութայ նա խոռվեալ, և անձն ժուծկալ խնդրէ զանապատ» (էջ 40):

Նման դեպքերում միշտ չէ, որ էական որևէ բան չի փոխվում. օրինակ՝ Գրիգորի հաջորդը՝ Արիստակեսը, ըստ Դրասխանակերտցու «ջանացեալ քրիստոսադիր կիտին նուաճել զհօտ իւր ի կամս Քրիստոսի, զմտնս հաւանողականաւ, իսկ զմտնս բռնաւորականաւ կարգաւ ջանայր պահել յակաստանի» (էջ 40—41): Տրդատի մահվանը նվիրված գլխում, նրան համեմատելով Լուսավորչի հետ, Խորենացին շեշտում է թագավորի առավելությունը վերջինիս ներկատմամբ՝ «այլ գառաւելութիւն ասեմ աստ թագաւորին. քանզի խորհին յաղագս Աստուծոյ և ճգնակեցիկ լինելն՝ զոյգ երկոցունց. իսկ նուաճել հաւանողական կամ բռնաւորական բանի՝ առաւել էր թագաւորին շնորհ» (Բ, ԶԲ, 245—246): Սա որպէս քրիստոնեությունը բռնի միջոցներով տարածելու ուղղակի վկայություն, հիշադրի, կարող էր վերաբերել միայն թագավորին: Խորենացին աշխարհիկ առաջնորդի այս հնարավորությունն էլ հենց շեշտում է ի տարբերություն հոգևոր առաջնորդի՝ Գրիգոր Լուսավորչի: Դրասխանակերտցին հարցի այս կողմը չի ընկալել կամ, թերևս, կարևոր չի համարել:

⁸ Այս շորս բառերից երեքի համար՝ խոհեմամիտ, փափկավանկ, փառուշեղ, հայկազյան բառարանագիրները վկայակոչում են միայն Դրասխանակերտցուն: Դրանցից վերջինը փառուշեղապետ է: Փառուշեղույին բաղադրյալ ձևերով գործածված է ավելի ուշ, Հետաքրքիր է, որ Խորենացու վերոբերյալ կապակցութեան հետ նույն կերպ է վարվել «քերթողաբար» գրող մի այլ մատենագիր, որի գրչի տակ այն դարձել է «համբակս ողջախոհս և ուշիմս, փաղգաբարբառս և երկայնավանկս» (տե՛ս Կարապետ եպս. Սասնեղոյ ներբողեան յաղագս վարուց և մահուան տ. վարդապետին Մեսրոպայ. Վաղարշապատ, 1897, էջ 51):

Դրասխանակերտցու գրիչը հատկապես «արդյունավետ» է. երբ նա փորձում է բնութագրել խորենացու այս կամ այն հերոսին: Այսպես, Տիգրան Երվանդյանի մասին խորենացին գրում է. «Քանզի սա ամենեցունց թագաւորացն մերոց հարստագոյն և խոհեմագոյն և արանցն այնոցիկ և ամենեցուն քաջ» (Ա, ԻԴ, 71): Ահա այս պարզ և դյուրընկալելի մտքի դրասխանակերտցիական տարբերակը. «Բայց Տիգրանայ առաւել ևս քան զբնաւ թագաւորս մեր իմաստայեղց հարստութեամբ խոհեմամիտ երևեալ՝ անցեալ զանցեալ զամենեքումբ լինէր» (էջ 21): Մեկ այլ օրինակ. Տիգրանի (Միջին) հաջորդ Արտավազդը «ոչ ինչ գործ արութեան և քաջութեան եցոյց. այլ ուտելեաց և ըմպելեաց պարապեալ, մօրից և եղեգնապուրակաց թափառեալ շրջէր և առապարաց, զիշավայրիս և զխոզս արածելով... ծառայ և ստրուկ որովայնի արդարև լինելով՝ զաղբիւս մեծացուցանէր» (Բ, ԻԲ, 137): Այս հանդիմանական բնութագիրը Դրասխանակերտցու մոտ ունի հետևյալ տեսքը. «Սա ոչ ինչ ըստ սակի հօրն քաջնափայլ փառաց պերճապալծառ գործ արութեան ցուցեալ. քան թէ միայն պորտաբոյծ և որովայնապարար լեալ և թափառեալ զհեւ որսոյ և իշավայրեաց՝ զաղբիւս մեծացուցանէր» (էջ 31):

Խորենացուց ընտրած նյութը նույնությամբ պատմություն չմոծելու և միաժամանակ նրա ոգով «քերթողաբար» շարադրելու Դրասխանակերտցու մտահոգությունը և այդ ուղղությամբ կատարված աշխատանքի մանրակրկիտությունը ցույց տալու համար բերենք ևս մի օրինակ: Շինել բառը գրաբարում ենդ իմաստով նշանակում է կառուցել, իսկ լայն առումով ունի շենացնել, բնակեցնել իմաստները: Խորենացին նույն հատվածում օգտագործում է երկու կիրառություններն էլ. Ամասիան «անցանէ զգետովն մերձ ի լեռն հարաւոյ և շինէ անդ առ խորշիւք լեռնոտինն... եռկուս տունս» (Ա, ԺԲ, 40), իսկ Գեղամը՝ «շինէ, զեզո ծովակին և թողու անդ բնակիչս» (Ե, ԺԲ, 41): Դրասխանակերտցին, որ անհրաժեշտ է համառել բերել իրար մոտիկ այս երկու վկայությունները, առաջին դեպքում է շինել բառի տակ դրել շենացնել, բնակեցնել իմաստը՝ «Իսկ Ամասիայ... շինեալ զհարաւակողմ լերինն ստորոտս» (մի կողմ թողնելով կոնկրետություն տվող «Երկուս տունս») և ընդհակառակը՝ երկրորդ դեպքում բառին տվել է առաջինի իմաստը. «Իսկ Գեղամ... դնացեալ յեզո ծովակի միոյ՝ և շինեալ անդ,—ստիպված իրենից ավելացրել է.— զեօղս և զբեղաստանս» (էջ 17):

դ) Դրասխանակերտցին, ամբողջական «Հայոց Պատմություն» ստեղծելու ձգտումով հանդերձ, խորենացու նման նպատակ չի ունեցել բոլոր շրջանները ներկայացնել նույն մանրամասնությամբ: Հին շրջանի պատմությունը, իր իսկ վկայությամբ, նա պետք է հնարավորին չափ համառոտեք և ներկայացնեք միայն այնքանով, որքանով դա անհրաժեշտ էր պատմության կապը պահպանելու համար: Նրա այս ձգտումը երևում է ամեն քայլափոխում, ուստի բացատրության կարիք են զգում այն դեպքերը, երբ նա երբեմն աղբյուրից տարբերվում է՝ նրանից ավելի ընդառձակ լինելով: Նման դեպքերի մի մասը հեշտությամբ խմբավորվում են իրենց հետևյալ հատկանիշների շնորհիվ. փաստական նորություն չեն պարունակում, ներբողական, գովասանական նկարագրական խոսքեր են:

Դրասխանակերտցու ընդարձակվելու միտումը (ոչ փաստական նյութի մեջ) հատկապես ակնառու է այն դեպքերում, երբ խոսքը վերաբերում է քրիստոնեական հավատին կամ նրա նշանավոր ներկայացուցիչներին: Քրիստոսին հավատող առաջին թագավորի մահվան մասին Պատմահայրը կարճաւոտ գրում է. «Վախճանի Աբգարիոս, թագաւորեալ ամս երեսուն և ութ» (Բ, ԼԳ, 156): Կաթողիկոս պատմիչը հարկ է համարում այս տեղեկությունը ճոխացնել. «Բայց Աբգար մեծի լուսոյ զանձն տուեալ և կենահաղորդ գտեալ

փառացն Աստուծոյ և հետեւալ ի խոստովանութիւն անշարժ լուսոյն՝ վախճանի, վերաթեւալ ի վերին աշտարակն Սիօն» (էջ 35): Դրասխանակերտցին նմանօրինակ հավելումներ ունի նաև բոլոր կաթողիկոսների համար:

Մատնանշված մի քանի ուղիները և բերված օրինակները նպատակ ունեն ցուցադրելու ոչ այնքան Խորենացուն նույնությամբ «չերկրորդելու» տպավորություն ստեղծելու բոլոր միջոցները, որքան՝ այդ աշխատանքին հեղինակի տված կարևորությունը: Բնական է, որ ցանկալի արդյունքի հասնելու համար միայն այդ միջոցները ոչ կարող էին բավարար լինել, ոչ էլ միշտ կիրառելի: Այդ է պատճառը, որ քաղած նյութի միտքը և բառապաշարը նույնությամբ պահելու պայմաններում Դրասխանակերտցու հիմնական զենքը սնացել են խոսքի քերականական, շարահյուսական և շարադասական վերակառուցումները, որոնց քննությունը այստեղ դուրս է մեր խնդրից: Ասենք միայն, որ այս խնդիրը հաջողությամբ լուծելու ձգտումն է այն պատճառներից մեկը, որ նրա խոսքում հաճախ են հանդիպում խրթնություններ և քերականական անհարթություններ:

Թվում է, թե նման խստությամբ այսպիսի մի խնդիր իր առջև դրած պատճիշդ կարող էր դիմել նաև այլ՝ ավելի արմատական և արդյունավետ միջոցների: Այսպես, նա կարող էր III—V դդ. դեպքերի համար միաժամանակ դիմել նաև Ադաթանգեղոսի, Բուղանդի, Կորյունի, Փարպեցու երկերին, երբեմն մեկին, երբեմն մյուսին հետեւելով կամ դրանց հենքի վրա ստեղծել Խորենացուց տարբերվող մեկ պատմություն: Սակայն նա այս ուղուց չի օգտվել: Այլ աղբյուրներից քաղված նյութը սակավ է և պայմանավորված որոշակի դրդապատճառներով: Այս հանգամանքը Դրասխանակերտցու՝ վերևում ներկայացված պատկերացումների լույսի ներքո շոշափելի կարևորություն և հնչեղություն է ստանում: Նշանակում է՝ Խորենացու «Պատմությունը» ուրախ պատմական աղբյուր Դրասխանակերտցու համար զգալի գերապատմություն է ունեցել մյուսների նկատմամբ, ճանաչվել առավել հավաստի, վավերական և հանձնարարելի: Սա նշանակում է նաև, որ Դրասխանակերտցին, ինչքան էլ մեծ կարևորություն է տվել իր շարադրանքի դրական հատկանիշներին, երբեք դա չի արել (կամ ինքը համոզված է եղել, որ չի անում) նյութի պատմականության հաշվին:

Դրասխանակերտցին ունեցել է ստեղծագործական բարդ և ինքնատիպ աշխատանոց, որտեղ իրենց պատշաճ տեղն են գրավել զեղագիտական՝ «քերթողական արվեստով» զրելու մասին նրա պատկերացումները: Մի քանի օրինակներով ցուցադրված երևույթը այդ սկզբունքի կարևոր մի օղակն է՝ կիրառված աղբյուրից քաղած նյութը հարասելիս: Այն եղել է տեական և աշխատատար, իրականացվել տարբեր միջոցներով: Դժվար է գտնել Խորենացուց քաղված թեկուզ մեկ նախադասություն, որ պատճենված լինի բառացի և չկրի հեղինակի նպատակադիր աշխատանքի հետքը: Այս առումով նա ճիշտ հակառակ դիրքերի վրա է կանգնած նույն դարի պատմիչներ Ուխտանեսից և Ասողիկից, որոնց բառացի քաղած հատվածները հաճախ ավելի չեն հեռանում Խորենացու բնագրից, քան նրա ձեռագրերը միմյանցից:

Սա, իհարկե, չի նշանակում, թե Դրասխանակերտցու «Պատմության» համապատասխան մասը օգտակար լինել չի կարող Խորենացու «Պատմության» բնագրի առավել նախնական վիճակը պարզելու համար: Նույնիսկ ընդհակառակը, եթե Ուխտանեսի և Ասողիկի բառացի պատճենումները հեշտությամբ կարող էին ճանաչվել և հետագայում սրբագրվել ըստ աղբյուրի, ապա

Դրասխանակերտցու զերափոխված շարադրանքում այդ նշարավորությունը ձգտում է նվազագույնի: Եվ քանի որ նրա նպատակն է եղել փոխել քաղած նյութի միայն ձևը, բայց ոչ փաստական կողմը, ուրեմն յուրատեսակ ձևով պահածոյացրել է այն, ինչ եղել է սկզբնաղբյուրի իր օգտագործած օրինակում:

МОВСЕС ХОРЕНАЦИ И ОВАННЕС ДРАСХАНАКЕРТЦИ

(О принципах пересказа источника)

А. Б. САРГСЯН

(Резюме)

В историческом труде автора X в. Ованнеса Драсханакертци изложение событий, имевших место до середины V в., почти полностью представляет собой краткий пересказ «Истории Армении» Мовсеса Хоренаци. Исследование этой части труда Драсханакертци наряду с характером его работы как историка (отбор необходимого фактического материала из первоисточников, его сокращение и сведение в связный текст) выявляет решаемую им самобытную и трудоемкую эстетическую задачу, ее диаметрально противоположные условия. Для автора, излагающего свой труд согласно правилам «поэтического искусства», каким был Драсханакертци, Мовсес Хоренаци по части владения словом представляется наивысшим авторитетом. Несмотря на это, взятые у него отрывки под пером Драсханакертци подверглись интенсивной переработке, однако с тем расчетом, чтобы уровень словесного искусства, свойственный Хоренаци, не оказался бы нарушен. Такая переработка не должна была также нарушать историчности изложения Хоренаци. Этот подход—изменяя текст Хоренаци, оставаться ему верным—непосредственно вытекает из представлений Драсханакертци о «поэтическом искусстве» и составляет их неотъемлемую часть. Изучение настоящего вопроса внесет свой вклад в исследование и восстановление текстов трудов обоих историков.